



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

Մամլո հաղորդագրություն

ապրիլի 14, 2022

## ՔՈԱՖ-ն ու ՀՀ-ում Լիտվայի դեսպանությունը նպաստում են կանանց ձեռներեցության զարգացմանը Հայաստանի գյուղերում

ԵՐԵՎԱՆ — Ապրիլի 14-ին Լոռու մարզի Դեբետ գյուղում կայացավ ՔՈԱՖ-ի ու լիտվական զարգացման գործընկերության ծրագրի շրջանակներում ՀՀ-ում Լիտվայի դեսպանության աջակցությամբ հիմնված «Դ Սալոն» անունը կրող գեղեցկության սրահի բացումը, որն առաջինն ու դեռևս միակն է գյուղում: «Չորակցված կանայք որպես փոփոխության ու գյուղական զարգացման գործակալներ» ծրագրի շրջանակներում ՔՈԱՖ-ը վերանորոգել է Դեբետ գյուղի վարչական շենքն ու նաև վերջինիս այն հատվածը, որտեղ տեղակայվել է «Դ Սալոն»-ը, ինչպես նաև կազմակերպել մասնագիտական և բիզնես դասընթացներ գյուղի կանանց համար՝ նպաստելով նրանց՝ ձեռներեցության ներուժի զարգացմանն ու երկրի սոցիալ-տնտեսական կյանքին ակտիվ մասնակցությանը:

Գեղեցկության սրահի բացմանը ներկա էին ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեն, ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը, Փամբակ խոշորացված համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանն ու այլ հյուրեր:

Համագործակցելով ՀՀ-ում Լիտվայի դեսպանության և Դյուքրիի հետ՝ ՔՈԱՖ-ը մեկնարկեց բիզնեսի զարգացման այս նախաձեռնությունը՝ կազմակերպելով վարսահարդարման ու մատնահարդարման դասընթացներ 24 կանանց համար Հայաստանի գյուղերից ու Արցախից: Մասնակցելով նաև բիզնեսի հիմնման ու ղեկավարման դասընթացներին՝ ըստ ցուցաբերած արդյունքների ընտրված երեք կանայք ստացան դրամաշնորհ՝ հիմնելու իրենց բիզնեսը՝ գեղեցկության սրահը: ՔՈԱՖ-ի համապատասխան մասնագետները շարունակում են խորհրդատվական աջակցություն տրամադրել կանանց՝ իրենց բիզնեսը սահուն կերպով ղեկավարելու համար:

«Դ Սալոն»-ը գտնվում է Դեբետ գյուղի վարչական շենքում, որն ամբողջությամբ վերակառուցվել է ՔՈԱՖ-ի կողմից: Երկրորդ հարկում են գտնվում վարչական շենքի անձնակազմի աշխատանքային տարածքը, հանդիպումների սենյակը, ինչպես նաև ժամանակակից բազմաֆունկցիոնալ գրադարանը՝ Գրադարակ Դեբետը: Ծուռով գեղեցկության սրահի հարևանությամբ՝ կրկին Դեբետի վարչական շենքում, կսկսի գործել ևս մեկ բիզնես՝ ՀայՓոստի ժամանակակից մասնաճյուղը:



CHILDREN  
OF ARMENIA  
FUND

Գյուղաբնակ կանանց սոցիալ-ֆինանսական վիճակի բարելավումն ու կարիերայի զարգացման նոր հնարավորություններով նրանց օժտելը հանդիսանում է ՔՈԱՖ-ի «ՍՄԱՐԹ գյուղ» հնգամյա ծրագրի կարևոր բաղադրիչներից մեկը: Ծրագիրն իրականացվում է Դեբետում, որն էլ կլինի Հայաստանի առաջին ՍՄԱՐԹ գյուղը: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է զարգացնել առկա բիզնեսներն ու հիմնել նորերը սննդի, հյուրընկալման ու գյուղատնտեսական ոլորտներում: Այժմ ՔՈԱՖ-ը նոր բիզնես մտքեր է ընդունում դեբետցիներից ու խրախուսում է նրանց տնտեսական ակտիվությունը:

### **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին**

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: